ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/3.1-3-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. օգոստոսի 15-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Լ.Բասմաջյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Լսեցին՝

2025 թվականի օգոստոսի 11-ին տեղի ունեցած մրցութային հանձնաժողովի նիստի արդյունքում ընդունված N3/3.1-3-25 արձանագրությամբ կայացված որոշման կատարման վերաբերյալ՝

Նշվեց, որ

2025 թվականի օգոստոսի 11-ին տեղի ունեցած մրցութային հանձնաժողովի նիստին ներկայացվեց, որ առկա է խնդիր: «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆՈՏՈՒՐԻԶՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ-ի կողմից իրականացվող միջոցառումը՝ EnoFest Armenia 2025 փառատոնը, նախատեսված է իրականացնել 2025 թվականի օգոստոսի 15-ին: Մրցույթի բացումը տեղի է ունեցել 2025 թվականի հուլիսի 22-ին, իսկ հուլիսի 28-ին տեղի է ունեցել Մրցույթի հայտերի գնահատման նիստը: Նիստի ընթացքում, գիտակցելով սուղ ժամկետների առկայությունը և այն հանգամանքը, որ հրավերի պահանջներից որոշները (սոցիալական թվային հարթակներով հրապարակումների տեղադրում, միջոցառման էջի ստեղծում և այլն) պետք է իրականացված լինեին միջոցառումից առնվազն 2 ամիս առաջ, Հանձնաժողովը որոշեց առաջարկել կազմակերպությանը կամ ապացուցել առնվազն 2 ամիս առաջ կատարված գործողությունների իրականացման փաստը, կամ հետաձգել փառատոնի կազմակերպումը: Բացի այդ՝ Կազմակերպությանն առաջարկվել է ներկայացնել նաև նախկին փորձը հավաստող պայմանագրերի հանձնման-ընդունման ակտերը: Առաջարկն ընդունելու դեպքում Կազմակերպությունը կարող է հաղթող ճանաչվել մրցույթի շրջանակում: Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում Կազմակերպությունը պատասխանել է, որ չի կարող հետաձգել միջոցառումը, քանի որ ունի միջազգային հյուրեր, որոնց ամրագրումներն արդեն իսկ արված են: Հանձնման-ընդունման ակտերի փոխարեն Կազմակերպության կողմից ներկայացվել են հաշիվ-վավերագրեր, վճարման անդորրագրեր: Ներկայացվել են նաև հիմնավորումներ և ապացույցներ առնվազն 2 ամիս առաջ համապատասխան հարթակներում փառատոնի լուսաբանման համար: Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը զեկուցագրով դիմել է ՀՀ ԷՆ աջակցող ստորաբաժանումներին, ապա նաև մասնակցել է ստորաբաժանումներից մեկում կայացած քննարկմանը Կազմակերպությանը հաղթող ճանաչելու կամ հայտը մերժելու որոշում կայացնելու հարցում: Մասնավորապես՝ տրամադրել տեղեկատվություն՝ արդյոք ներկա փուլում հնարավոր է կնքել պայմանագիր կազմակերպության հետ: Եթե ոչ, ապա ինչ հիմքով կարելի է մերժել կազմակերպության հայտը:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆՈՏՈՒՐԻԶՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ-ի հայտի վերաբերյալ որոշումը կայացվելու էր ՀՀ ԷՆ աջակցող ստորաբաժանումներից դիրքորոշում ստանալուց հետո:

ՀՀ ԷՆ աջակցող ստորաբաժանումները ներկայացրել են իրենց դիրքորոշումը, համաձայն որի, ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ դրամաշնորհի հատկացման նպատակով տվյալ պետական մարմնի ղեկավարը կազմավորում է մրցույթի հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով): Հանձնաժողովի անդամը պետք է ունենա դրամաշնորհի տրամադրման առաջադրանքը, ինչպես նաև՝ մրցույթի մասնակից կազմակերպությունների որակավորումն ու առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է դրամաշնորհային ծրագրին համապատասխան:

Նույն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը գործում է մինչև պայմանագրով կողմերի համար սահմանված պարտավորությունների ամբողջական կատարումը: Որոշման 31-րդ կետի համաձայն՝ մրցույթի արդյունքներն ամփոփվում են հանձնաժողովի ամփոփիչ

նիստում՝ հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա: Հանձնաժողովն ընդունում է որոշում այն կազմակերպության վերաբերյալ, որի հետ կարող է կնքվել դրամաշնորհի տրամադրման (նվիրաբերության) պայմանագիր, ինչպես նաև այն կազմակերպության (կազմակերպությունների) վերաբերյալ, որի (որոնց) հետ նման պայմանագիր չի կարող կնքվել:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի «Մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին» N 1-Ա հրամանով ձևավորվել է մրցութային հանձնաժողով: Հանձնաժողովը առաջնորդվում է Որոշմամբ և ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի կողմից հրապարակված դրամաշնորհի հատկացման կազմակերպությունների ընտրության մրցույթի հրավերով (այսուհետ՝ Հրավեր) սահմանված դրույթներով: Մասնավորապես, հանձնաժողովի գործառույթներն են՝ ընդունել որոշումներ մրցույթի պայմանների հաստատման, հայտերի գնահատման և վերլուծության, լավագույն առաջարկի ընտրության, արդյունքների ամփոփման, հայտերի մերժման, արձանագրության կազմման և մրցույթի արդյունքների հրապարակման հարցերում: Մրցութային հանձնաժողովը ունի լիազորություն ինքնուրույն կայացնելու մրցույթի բոլոր ընթացակարգերին, հայտերի գնահատմանը և արդյունքների հաստատմանը, ինչպես նաև՝ հայտերի մերժմանը վերաբերող որոշումները՝ համաձայն գործող օրենսդրության և մրցույթի կանոնակարգի պահանջների: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվել է առաջնորդվել Որոշմամբ սահմանված դրույթներով, Հրավերով և Զբոսաշրջության կոմիտեի կանոնադրությամբ:

Բացի այդ՝ տեղեկատվություն է տրամադրվել նաև առ այն, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի կողմից 2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի միջոցառումների իրականացման համար «3.1-3-25-ԶԿ-ԴՄ» ծածկագրով հայտարարված դրամաշնորհի հատկացման կազմակերպությունների ընտրության մրցույթի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) 2.4-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ սույն մասի 2.3-րդ կետում նշված որակավորման տվյալների չափանիշների գնահատման համար մասնակիցը հայտով ներկայացնում է առնվազն 2 փառատոնի կազմակերպման փորձի նկարագրություն (նախկին փորձը հավաստող կնքված պայմանագրեր, *այդ թվում՝ հանձնման ընդունման ակտեր և այլն*), նշենք որ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով կամ «և» կամ «ու», ինչպես նաև «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա ստորակետերով կամ «և» կամ «ու» շաղկապներով բաժանված պայմանների մասով այդ նորմի կիրառման համար անհրաժեշտ է բոլոր պայմանների առկայությունը, իսկ «կամ» շաղկապով բաժանված պայմանների մասով բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը, հետևաբար այս կարգավորման տրամաբանությունից ելնելով՝ պետք է ներկայացվի ինչպես հանձնման-ընդունման ակտը, այնպես էլ մյուս փաստաթղթերը:

Անդրադառնալով այն խնդրին, որ կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումը նախատեսվել է իրականացնել 2025 թվականի օգոստոսի 15-ին, հայտնում ենք, որ համաձայն Հրավերի 2.4.1-րդ կետի Զբոսաշրջության կոմիտեի կողմից *փառատոնի կազմակերպման ժամկետը սահմանել ոչ ուշ, քան 2025 թվականի նոյեմբերի 20-ը:*

Դիրքորոշման համաձայն՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ դրանց կազմում բացակայում են հանձնման-ընդունման ակտերը, իսկ դրանց փոխարեն ներկայացվել են հաշիվ-ապրանքագրեր, որոնց զգալի մասը ներկայացված է այլ կազմակերպությունների անունով: Այսինքն՝ մրցութային հայտի համար սահմանված պահանջի կատարումն ապացուցող փաստաթղթերի ներկայացման հիմքերը փաստացի բացակայում են ներկայացված փաթեթում:

Հանձնաժողովի կողմից հաշվի են առնվել և ընդունվել են աջակցող ստորաբաժանումների կարծիքները:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան փաստաթղթեր չներկայացրած թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆՈՏՈՒՐԻԶՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ-ի** կողմից ներկայացված հայտը:

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Լ.Բասմաջյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Ա.Ոսկանյան - _____

Շ.Հովսեփյան - _____